

մուսնին ակնարկելով) գիշեր ցերեկ վրաց կը մտածէ. «Ի՞նչ պիտի ըլլայ աս խեղճ աղջիկը», կ'ըսէ, բան մը կը խորհի, կիւճիդ չի գայ, ամա, եաւրուս, աղէկութեանդ համար է. «Արամը հիւանդանոց գնելը ամէնէն բարի բանն է, կը խորհի, հոն շատ լաւ կը նային, իրեն ալ ոտքը կ'արձըկուի. մինչեւ ե՞րբ ասանկ. իրեն ալ բարի խըս-մէթ մը կ'ըլլայ, և երկուքն ալ կը շահ-ուին»: Եւ ինչի համար գէշ չէ մարդուս խոր-հածը. իրաւ որ սիրտը շատ բարի է, մեղք ես, օրերդ արեւով ու սետով պիտի անցնին»:

Սաթենիկին գլուխը կախ մնաց իր դրացիին այս խօսքերուն վրայ. և աչքերը արցունքէն պղտորած, ըսաւ տնոր. «Մայ-րիկ, շատ շնորհակալ եմ բայց չեմ կրը-նար ընել այդ բանը, աղբորս մէկ երկու օրուան շտապութեան հիւանդ չէ. ես ա-ռանց կորօրս կուշտ հաց չեմ կրնար ու-տել. չըլլա՛ր, չըլլա՛ր, հիւանդանոցը տունս է, ես եմ անոր հիւանդապահուհին. գի-տեմ, թերեւ ինձմէ աղէկ նային, բայց ես առանց եղբորս չեմ կրնար ապրիլ:

* * *

Երկար տարիներ անցան այդ օրէն. Արամ պառկած է միշտ անկողին մէջ. Սաթենիկ հիմա ճմլթկած ու փոթաւած պառաւ մըն է, մագաղաթի չորութեամբ. ոսկորները կը համրուին: Եղբայրը, Արամ, ցերեկին միշտ բաց մնացած դրան զիմաց, անկողին խորէն, դուրսի արեւին կը նա-յի. մագերը, մօրուքը ճերմկած ծերուկ մըն է ան, երեսները թոռած ու կախ-ուած. կը նայի աչքերուն տակէն, իր պառուած քրոջը. ա՛խ մը դուրս կուգայ իր հաստըցած շուրթներէն, և կ'ըսէ յա-ճախ ինքնիրեն. «Եւ ա՛խ, ինձի համար մը-խաց քուրս»:

Սաթենիկ միշտ դուարթ, միշտ ժըպ-տուն, միշտ ժիւր, կըրօրը տմէն պէտքե-րուն կը հասնի, և իր առանձնութեան մէջ միշտ կ'աղօթէ սա. «Ա՛ստուածամար, փառք Բեզի, ներէ՛ մեղաւորիս, աղօթքս լսեցիր, աղբորս ինձի ձգեցիր. մէկ ա-ղօթք մըն ալ ունիմ Բեզի. Աղբորս մի-նակ մի՛ ձգեր, ձեռքովս հողը գնեմ դոն, և անկէ ետք միայն ես ալ վար գնեմ կեանքիս այս ծանր բեռը. հօգիւդ դուր-պան, Աստուածամար»:

Երուսաղիմ

Գ. Մ.

Ս Ո Ւ Ն Կ Ը (*)

Բ.

Խուճկը՝ pus Ազաւ Կարողիկ Եկեղեցւոյ

Հասկնալի է որ երբ Եկեղեցի մը պատ-շաճօրէն օծուած և նուիրագործուած է, և սուրբ պաշտամունք ու արարողութիւն-ները կանոնաւորապէս տեղի կ'ունենան հոն, ասանկ Եկեղեցի մը տպաստանարան մըն է արդէն առօրեայ կեանքի հոսանք ու պայքարներէն և հասարակտեղիք մտահո-ղութիւններէն ու մտածումներէն յոգնած և ուժասպառ մտքի մը, տառապած հոգիի մը համար. որովհետեւ անոր մթնոլորտը խաղաղութեան և անձնութեան թըռ-թռացումներով բնականօրէն ըլլալով միշտ բարեբար աղղեցութիւն մը կը գործէ մար-դուն վրայ: Սակայն և այնպէս, օրէ օր հոն եկող ժողովուրդը իրեն հետ կը բերէ նաեւ իրեն անհատական մտահոգութիւն և նե-ղութիւններէն մաս մը. անոնց միտքերը լեցուած կ'ըլլան արտաքին աշխարհի վե-րաբերեալ տեսակ տեսակ մտածումներով ու խորհուրդներով:

Սոյն խորհուրդ և մտածումներու հա-մար չենք կրնար ըսել թէ անպայմանօրէն գէշ և անբաղձալի կ'ըլլան, սակայն չենք կրնար նաեւ ըսել թէ բնոյթով կրօնական կ'ըլլան: Հաւատացեալներուն մէջ կը զտ-նուին նաեւ այնպիսիներ՝ որոնք ընկճուած են խղճահարութեամբ և այլ պատճառնե-րով: Ուստի փափաքելի է որ Եկեղեցին մաքրագործուի նմանօրինակ թոթապցում-ներէն, դեռ կանոնաւոր պաշտամունքը չը սկսած:

Ուրեմն, լաւ է որ պաշտօնէութիւն և դպիրները կարգով ու կարգապահութեամբ եկեղեցի մտնեն և զրաւեն իրենց տեղերը: Իսկ աւելի լաւ կ'ըլլայ երբ սոյն կանոնա-ւոր և կարգապահ մուտքը լուրջ թափօրի մը ձեւը առնէ. որովհետեւ ասով մաքրա-գործումի նախնական քայլերը առնուած կ'ըլլան և ժողովուրդը զիւրութիւն ստա-

(*) Տե՛ս ՍԻՈՆ, 1930 Դեկտեմբեր, երես 391: Նախորդ Ա. մասը Le Coté Occulte de la Franc-Maçonnerie գրէԼԵ Էր. այս Բ. մասը բաղուած է The Science of the Sacraments անուն գրէԼԵ:

ցած կ'ըլլայ ինքնամիտփութելու, միտքը հանդարտեցնելու և ուշադրութիւնը պաշտամունքին վրայ կեդրոնացնելու:

Այս աշխատանքը դիւրացնող մասնէն արժէքաւոր ազդակներէն մէկը խունկն է. որովհետեւ անկիւս քահանային կամ եպիսկոպոսին կողմէ նախապէս օրհնուած ըլլալուն, արձակուող մուկը մաքրող և վերացնող ազդեցութիւն մը կը տանի ուր որ թափանցելու ըլլայ: Եպիսկոպոս մը թափօրով անցած պահուն իր օրհնութիւնը կը տարածէ ժողովուրդին վրայ խաչի նշանով: Քահանային վրայ չի ծանրանար այս պարտականութիւնը. սակայն աս ալ կրնայ մեծապէս օգտակար հանդիսանալ հաւատացեալներուն, երբ թափօրով քալած պահուն իր միտքը զօրաւոր կերպով կեդրոնացնէ խաղաղութեան գաղափարին վրայ, և սերտագին փափաքի որ ժողովուրդը մասնակից ըլլայ Աստուածային խաղաղութեան (երես 26-28):

Ասկէ յետոյ կուգայ Սեղանը խնկարկելու գեղեցիկ արարողութիւնը, և հոս պէտք է պզտիկ բացատրութիւն մը: Այս սովորութիւնը մեզի հասած է Եկեղեցւոյ առաջին օրերէն: Որիզենէս հայրապետը կը խօսի այս մասին: Խիստ իմաստալից է խունկի գործածութիւնը. ան կը ծուռայէ իրր խորհրդանշան պատուելու նաև իրր մաքրիչ: Կը բարձրանայ Աստուծոյ սոջն և իրր ժողովուրդին աղօթքներուն և նուիրումին խորհրդանշանը. կը տարածուի Եկեղեցիին մէջ իրր խորհրդանշանը Աստուծոյ շնորհներու քաղցրութեան: Կը մատուցուի իրր յարգանքի նշան, ինչպէս որ սովորութիւն էր աւելի հին կրօնքներու մէջ: Կը գործածուի նաև մաքրագործումի որոշ և յըստակ գաղափարով: Առ այս քահանան անոր կը հաղորդէ սուրբ ազդեցութիւն մը այն նպատակ կամ պաշտօնով՝ թէ ուր որ թափանցէ անոր հոտը, ուր որ երթայ անոր օրհնուած մասնիկներէն ամենափոքր մէկ հատիկը, պէտք է հոն տանի խաղաղութեան և մաքրութեան նշանակութիւն մը և ի բաց վանէ բոլոր աններդաշնակ մտածում և զգացումները:

Առանց օրհնուելու իսկ լաւ է խունկին ազդեցութիւնը, որովհետեւ ան կը բաղկանայ ուշադրութեամբ ընտրուած խէժերէ, որոնց թոթափումին աստիճանը թէև կա-

տարեկապէս կը ներդաշնակուի հոգեկան և ջերմեռանդութեան թոթափումներուն հետ, յայտնի կերպով ներհակ է գրեթէ բոլոր ուրիշ տեսակ թոթափումներու: Մաքրիչ ազդեցութիւնը կը զօրացնէ միայն անոր բնական յատկութիւնները, և պարագային համեմատ ալ անոր կը հաղորդէ մասնաւոր ծփանքներ: Ինչ որ ալ ըլլայ միշտ փափաքելի է անոր գործածութիւնը կրօնական արարողութիւններու առընթեր: Ծանդանի փայտը (sandal wood) ևս ունի այն յատկութիւններէն մեծ մաս մը: Վարդի իւղին հոտը լաւ կ'ազդէ մարդուն վրայ, թէև բնոյթով բոլորովին տարբեր է:

Սունկի տեսակները հարիւրէ աւելի են, և բազկացնող իւրաքանչիւր տարր մասնաւոր կերպով մը կ'ազդէ մարդուն մարմիններուն (ֆիզիքական և ոչ-ֆիզիքական, քրոմ.) վրայ: Ինքնին գիտութիւն մըն է անուշահոտութիւններու պատրաստութիւնը, և թէ՛ բարի և թէ՛ չար ազդեցութիւններ կրնան հրաւիրուիլ անոնց միջոցով: Եկեղեցիներու համար պատրաստուած գրեթէ բոլոր խունկերը լայն համեմատութիւնով կ'ընդունի և լիբանոս կը պարունակեն, որովհետեւ փորձառութեամբ հասկցուած է որ ասոնք թէ՛ հաճելի և թէ՛ ազդեցիկ են: Կնդրուիլ զօրաւոր մաքրագործիչ մըն է. ան կ'տրուի կերպով կը վանէ ամեն տեսակ կոշտ ու անմաքուր խորհուրդներ, և անհրաժեշտ է մասնաւորապէս այն տեսակ Եկեղեցիներու համար, ուր կը յաճախեն բաւականաչափ զարգացում չստացած անհատներ: Հանգարտաբար այն հատներէ բաղկացած համայնք մը ունեցող պզտիկ Եկեղեցիներու համար պէտք են տարբեր բաղադրութիւններ որպէս զի ամենալաւ արդիւնք ձեռք բերուի:

Անձնուիրութեան յատուկ խէժը լիբանոսն է: Ասոր հոտը ազդեցութիւն կ'օգնէ նշուիրումի ոգւոյն զարթնումին ուր որ կարելի է, եւ սոյն ոգին կը զօրացնէ երբ պզտի նշոյլ մը կամ սկզբնաւորութիւն մը կայ արդէն:

Այս երկու խէժերու չափաւոր խառնուրդ մը կը բաւէ գործնական նպատակներու համար, և կրնայ իրր հիմ նկատուիլ երբ պէտք ըլլայ մասնաւոր յաւելումներ ընել մասնաւոր նպատակներու համար:

Երբ բուրվաորը և խնկամանը մօտենան, պատարագիչը զգալով մաս մը խուճկ կը դնէ բուրվաորին մէջ և կ'օրհնէ ըսելով՝ «Յրհնուիս Անով որու փառքին համար պիտի ալրուիս»։ Եթէ եպիսկոպոս մը կոյ եկեղեցիին մէջ, աւելի լաւ է որ անկաօրհնէ խուճկը, տրուած ըլլալով որ եպիսկոպոսը քիչ մ'աւելի ոյժ կ'ընայ հաղորդել անոր քան ինչ որ կ'ընայ ընել քահանայն։ Խուճկի օրհնութեան պահուն ամենայաւ նպատակը որուն վրայ միտքը պարտի կեդրոնանալ, այն է թէ անոր ծովը ճամբան մաքրէ, թափանցէ ամենուրեք, եւ ներգաշնակէ ու հոգեկան ուղղութիւն մը տայ, քննադատէ ինչ բանի որ հանդիպելու ըլլայ։ Խուճկը օրհնելու ատեն ես մտովի կը մաղթեմ որ անկաօս զտիկէ Տիրոջ ճամբան» (*):

Յաճախ կը հարցնեն մեզ թէ աւելի լաւ չ'ըլլար խնկամանին ամբողջ պարունակութիւնը օրհնել միանգամայն, փոխանակ զործածուելիք մասը օրհնելու շարունակ։ Եւս պարագային մէջ խուճկը այդչափ ազդեցիկ չ'ըլլար, տրուած ըլլալով որ հաղորդուած մագնիսական ոյժը երկար ատեն չի կ'ընար մնալ խէժերու վրայ ինչպէս որ կ'ըլլայ մագնիսացուած կամ օրհնուած թանկագին քարերու պարագային։ Ուստի լաւ է որ խուճկը օրհնուի ճիշդ այդ վայրկեանին երբ կը դրուի կրակի վրայ։ Որովհետեւ այս կերպով մագնիսականութեան հաղորդուելը կը զուգադիպի խուճկի հալելու ժամանակին հետ, որով աւելի լաւ կը միանայ անոր և հետեւորար աւելի օգտակար կը հանդիսանայ (երես 93-95):

Աղեխանդրիս

ԼՈՒՍԱՐԱՐ



(*) ա. Այս ըսողը գրքին հեղինակն է որ Ազատ Կաթողիկ եկեղեցւոյ եպիսկոպոս մըն է։ Բ. Ըսել կ'ուզուի որ անանկ ճամբայ կամ մթնոլորտ մը տեղի ունի որպէս զի Տիրոջմէն եկող հոգեկան ոյժը անարգել եւ առանց խղճողութիւն հասնի հաւատացեալներուն։

Ծ. Թրգմ.

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՄՍՏՆԱԳՐԱԿԱՆ ՀԵՏՈՉՈՑՈՒԹԻՒՆՆԵՐ. ԳՆՆՈՒՔԻՆ և ԳՆՈՒՔԻ. Հատոր Գ. (8. Ղեւոնդ երէց Պատմագիր. 9. Ղեւոնդ երէց եւ Մովսէս Խորենացի. 10. Հայ Բագրատունիներու Տոմարաւոր)։ Գրեց՝ Հ. Ներսէս Վրդ. Ա. Կիւրեան, Ազգային Մատենադարան, քիւ ձեռ. Վ. Կիւրեան, Միսիրաւեան Տպարան, 1930. Երես 331. Գին 4 Ֆ։

Ստուար հատոր մը, խղճամիտ և մանրազնիւ ուսումնասիրութիւն մը Ղեւոնդի և ասոր ու Մ. Խորենացիի առնչութեան մասին։

Հատորը Ազգ. Մատենադարանի սովորական ծաւալն ունի (12x20 սմ.), մաքուր թուղթի վրայ։ Երեք մասի կը բաժնուի. Ա. և Բ. Մասերը — մանաւանդ Բ. ը՝ Խորենացիի և Ղեւոնդ — ամէնէն կարեւորներն են և մեզ աւելի կը հետաքրքրեն, ուստի կ'արժէ քիչ մը ծանրանալ ասոնց վրայ։

Ա. — Ղեւոնդ երէց Պատմագիր

Ղեւոնդ երէց Բ. դարու ժամանակակից եւ ստուգապատու մեր միակ պատմիչն է. անոր գործը շարունակութիւնը կը նկատուի Սերէոսի վերջին գլուխներուն։ Համառօտ կը պատմէ Արաբաց արշաւանքները դէպի Հայաստան։ Իր պատմութիւնը գրած է Շապուհ Բագրատունի իշխանին հրամանով. ասոր համար է որ մեծ համակութիւն ցոյց կուտայ Բագրատունեաց տոհմին հանդէպ և ընդհակառակը, յանդիման, հակահրութիւն՝ Մամիկոնեան նախարարութեան հանդէպ, որոնք Բագրատունեաց հակառակորդները կը նկատուէին։

Ղեւոնդի պատմութիւնը կ'ընդգրկէ 640-790, 150 տարուան դէպքերը, զորս երկու նուագով գրի առած է. նախ՝ 774-ին, մինչև այդ թուականին պատմութիւնը (Ա-ԼԳ, ԳԼԽ), ապա մնացեալը՝ 790-ին։

Հ. Ն. Ալիքեանի գովասանքները՝ Ղեւոնդի պատմութեան մասին՝ քիչ մը չափազանց կը թուին։ Կը գրէ. «Հայ ածուխ մէջ նա առաջինն է, Սերէոսէն ետքը, որ խելամուտ է պատմագրելու արուեստին, կը կշռէ պարագաները հասուն դատողութեամբ և կը ներկայացնէ դէպքերը համառօտաբօս, ստուգաբան, իրապատշաճ, պատկերաւոր և վայելուչ արտայայտութեամբ» (էջ 104):

Ղեւոնդ՝ իրրեւ ժամանակակից պատմիչ՝ ըստուգապատու է. սակայն իր գործը գրական տեսակէտով և ոճի վայելչութեան կողմէ շատ ետ կը մնայ Խորենացիէն։ Ահա թէ Դուրեան Ս. ինչ կը գրէ անոր մասին, իր ձեռագիր Հայ Մատենադարանի Պատմութիւնի մէջ. «Իրրեւ գրական աշխատութիւն մեծ արժէք մը չունի այն, վասնզի իր պարզ ու հետեւի ոճէն կ'ընայ մականքներու» որ կը թմական մեղի ծանօթ չըլանակէն